# ՄԱՆՐԱԼՈՒՐՔ·

Օդապարիկի գիւտը վաղուց անցել է սովորական երեւոյթների շարքը· սակայն մի բան ցարդ անլուծանելի է մնացել՝ ուղղել օդապարիկը ըստ կամաց: Այս Գորդեան հանգոյցն այժմ լուծուելու վերայ է, սակայն շատ թանկ գնով: Տեմպելհոֆում օդաչու Վելֆերտը ահագին բազմութեան առաջ փորձում էր իւր նորակազմ օդապարիկը, որ՝ նորա խօսքին նայած՝ ըստ իւր ցանկութեան պիտի ուղղէր:

Ցիրաւի նա բարձրացաւ 1000 ոտնաչափ եւ մեծ յաջողութեամբ ուղղեց քամու հակառակ իւր գործիքը: Բայց յանկարծ հանդիսականները նկատեցին մակոյկի մէջ հրդեհ, ապա եւ մի ճայթ, նման թնդանօթի որոտի: Գունդը պայթեցաւ եւ մակոյկը ամբողջովին բոցերի մէջ ընկաւ գետին: Իսկոյն շտապեցին դժբախտութեան տեղը եւ գտան միայն երկու մարդկանց ածխացած անդամների կտորները: Վելֆերտը իւր ամբողջ կարողութիւնը դրել էր այդ նպատակի համար, եւ արդէն մի քանի անգամ յաջողուել էր ճանապարհորդել օդապարիկով: Վերջին փորձը փոխանակ ջանքերը պսակելու կեանքը խլեց:

*
* *

*Ոճրագործ մուրացկաններ*: Օտար ճանապարհորդները գովեստով խօսում են Ռուսաստանի մուրացիկ դասակարգի վերայ· Նրանք համեստ, խեղճ եւ մեծաւ մասամբ սրբազան երգեր ասողներ են, նստում են իրենց համար, ածում ու երգում սաղմոսներ եւ ոչ թէ անցորդի երեսից կախ ընկած ողորմութիւն պոկում:

Ցիրաւի ով եղել է Ռուս· տօնավաճառներում, տեսած կըլինի այդ մուրացիկներին այնպէս, ինչպէս յիշուեց քիչ առաջ: Սակայն մի բան զարմանալի է· ամեն մի մուրացիկ ծերունու կողքին նստած է լինում մի երեխայ, ըստ մեծի մասին կամ կոյր, կամ խուլ, կամ կաղ եւ զարմանալի այլանդակուած:

,,Неделя" շաբաթաթերթի 24-րդ համարում երկարօրէն պատմուած է մի քստմնելի ոճրագործութիւն, որ պարզում է յիշեալ դժբաղդ երեխաների պատմութիւնը: Դուրս է գալիս, որ այդ մուրացիկ ծերունիները Ռուսաստանում ամենամեծ ոճրագործ ընկերութեանց անդամներ են – գողանում են գիւղերից երեխաներ, ամենազազրանային անգթութեամբ զրկում են նորան աչքի լոյսից, կամ խօսելու կարողութիւնից, կտրում կամ ոլորում ձեռները կամ ոտները եւ երեսը կտրատելով կամ այրելով այլանդակում եւ ապա ման ածում իրենց հետ եւ ողորմութիւն հաւաքում: Մէջ ենք բերում այդ թշուառութեան բաժակը ըմպողներից մէկի պատմութիւնը:

Մի ութը տարեկան աղջիկ իւր մօր քրոջ մօտից տուն գնալիս ընկնում է այդ մուրացկանների ձեռքը: Նրանք կապում են աչքերը, տանում են իրենց բնակարանը· եւ նախ խորհում, թէ ինչ անեն թշուառ աղջկան:

Մէկն առաջարկում է կտրել ձեռքերը, միւսը աչքերը հանել, մի ուրիշը ոտքը կտրել: Վերջապէս որոշում են կուրացնել: Ամբողջ երեսը ծիւթ են քսում, դնում են աչքերի վերայ պատրոյգներ եւ կրակ են տալիս: Կտրում են ոտների եւ ձեռների մկանները, ոլորում են ձեռների մատները: Աղջկայ ասելով, երբ արձակել են առաջին անգամ նորա աչքերի կապը, տեսել է այնտեղ եւ երկու երեխաներ, որոնք, չկարողանալով տանել այդ բոլոր դժոխային տանջանքները, մեռել են: Մուրացկանները հէնց աղջկայ ներկայութեամբ վճռել են մեռածների մարմիններով կերակրել իրենց խոզերին:

Երկու շաբաթ աղջկան պահելուց յետոյ, տարել են իրենց հետ Торопца, ուր եւ այդ թշուառ աղջիկը պատահմամբ այնտեղ եկող իւր օտարականի ողորմութիւն տուող մօրաքրոջ ճանաչում է ձայնից· այստեղից էլ հէնց բացւում է այդ չարագործութեան վարագոյրը:

Այս տեղեկութիւնները հաղորդող քահանայի՝ Н.-ի ասելով, այդ մուրացկանները Կիեւի նահանգում բազմաթիւ են, ունին լաւ տներ, տոկոսով տուած փողեր, լաւ լաւ ձիեր ու կառքեր, եւ խոզի երամակներ ,,որոնք երեւի կերակրւում են գողացուած· բայց նրանց բարբարոսութեանը չդիմացած երեխաների մարմիններով":

Նոյն շաբաթաթերթի 26-րդ համարում կարդում ենք· ,,Հեռագիրը հաղորդում է, որ Николаевъ-ում ոստիկանութիւնը ազատել է մուրացկանների ձեռքից յունիսի 26-ին մի վեցամեայ մանուկ, որ խլել էին հէնց մօր ձեռքից եւ ոտները ոլորել: Ականատեսների կատաղութեանը չափ չկար, եթէ չարագործներին չպաշտպանէին, ժողովուրդը տեղն ու տեղը կը սպանէր նրանց:

*
* *

Հնդկաստանում զարհուրելի երկրաշարժ է պատահել, որ բազմաթիւ քաղաքներ ու գիւղեր աւերակ է դարձրել, կամուրջներ խորտակել, երկաթուղու ճանապարհները եւ հեռագրալարերը խանգարել, փչացրել: Փողոցների եւ ճանապարհների վերայ ահագին փոսեր են բացուել, որտեղից աւազ եւ ցեխ է դուրս խփում ահագին սիւներով: Բազմաթիւ մարդիկ են զոհ գնացել, մնացածները սկզբում թողել իրենց տունն ու տեղը եւ դաշտերում մի կերպ ապրելիս են եղել, բայց սարսափելի անձրեւներն եւ հեղեղներն ստիպել են նրանց դիմել իրենց կիսախարխուլ բնակարանները: Հաղորդակցութեան ընդհատուելու պատճառով առ այժմ դժուար է իմանալ թշուառութեան իսկական չափը:

*
* *

*Թռչելու գործիք*.—Խարկովում Бирж. Вѣд. ասելով ոմն Դանիլեւսկի ցոյց տուեց բազմութեան թռչող գործիքի մի նմուշ, որ շատ պարզ կազմութիւն ունի:

Այդ գործիքի միջոցով մարդ կարողանում է թռչել ամենայն հեշտութեամբ, իջնել, բարձրանալ, ցանկացած ուղղութեամբ գնալ: Փորձերը դահլիճի մէջ շատ յաջող են անցել· մանաւանդ հորիզոնական թռիչքը հիացրել է բոլորին: Մեծ ապագայ են գուշակում այդ գործիքին, աչքի առաջ ունենալով այն բազմադիմի գործածութիւններն ու նրանցից յառաջացած օգուտները: Գործիքը կարժենայ առ այժմ 1000 ր:

*
* *

Պաստէօրին արձան կանգնեցնելու համար բացուած ստորագրութիւնը հասել է 297,000 ֆրանկի (100,000 ռուբ.): Յանձնաժողովը փակուած է համարում ստորագրութիւնը եւ ձեռք է զարնում կազմել արձանի ծրագիրը, արձանը պիտի պատրաստէ յայտնի արձանագործ *Ֆալգիերը*:

*
* *

Յունիսի 14-ին Անտվերպենից դուրս եկաւ մի արշաւախումբ հետազօտելու հարաւային բեւեռը· այս ճանապարհորդութեան ծախսը իւր վերայ է առել Բրիւսելի աշխարհագրական ընկերութիւնը: Բելգիկա նաւը ուզում է անմահանալ հարաւային բեւեռի հետազօտելու պատմութեան մէջ այնպէս, ինչպէս Ֆրամ հիւսիսում: Սակայն ունի՞ արդեօք Նանսենի նման համարձակ եւ արի հետազօտող: